ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Խ. Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆ

Երևանի պատմության համար կարևոր վկայություններ են տալիս քաղաքի ողջ տարածության վրա և նրա ծայրամասերում հայտնաբերված հին ոսկյա, արծաթյա ու պղնձյա դրամները։ Դրանք հնամյա Երևանում շրջանառության մեջ եղած տարբեր դարաշրջանների վերաբերող դրամական միավորներ են, որոնցով կատարվել է այստեղ առևտուրը։ Այդ դրամների պատկերատիպերով, նրանց վրա դրոշմված տարբեր լեզուների արձանագրություններով, ինչպես նաև դրամահաշվային սիստեմների և այլ կարգի տվյալներով արտացոլվում են Երևանի պատմության հիմնական փուլերը և հաճախ բացահայտվում այնպիսի փաստեր, որոնք լրացնում, երբեմն ճշգրտում և անգամ շտկում են գրավոր աղբյուրներից քաղված մեր պատկերացումները։ Ներկայումս ավելորդ է պատճառաբանել, թե որքան կարևոր են հին դրամների ու դրամական գանձերի վկայությունները որևէ քաղաքի պատմության համար։ Վերջին հաշվով առանց դրամային շրջանառության չի կարող լիարժեք լուսաբանվել ու բնորոշվել քաղաքային կյանքի պատմությունը։ Այդ պահանջների թելադրանքով Երևանի 2750-ամյակի առթիվ ներկայացնում ենք դրամագիտական տվյալներ հնամյա այս քաղաքի վերաբերյալ՝ վաղ հայկական ժամանակներից մինչև XIX դարի սկիզբը։

Երևանում գտնված վաղագույն մետաղյա դրամները վերաբերում են մ. թ. ա. V դարին։ Այդ իրողությունը հայտնի դարձավ 1956 թ. Էրեբունի ամրոցի հնագիտական պեղումների շնորհիվ։ Այստեղ գտնվեցին հոնիական ծագման երկու արծաթյա փոքրիկ դրամներ, թողարկված մ. թ. ա. V դարում Միլեթ քաղաքում։ Դրանք երկուսն էլ նույնանման են իրենց պատկերատիպով, բայց դրվագված տարբեր կնիքներով[1]։ Նրանց մի կողմի վրա պատկերված է առյուծի գլուխ բաց երախով, իսկ մյուս կողմում քառակուսի փոսիկի մեջ դրոշմված է մի զարդանշան, բաղկացած չորս սլաքաձև գծերից, որոնք ձգվում են կենտրոնից դեպի անկյունները և ամփոփված են աղեղներով։ Փոքրիկ տրամագծի և կշռային չափերի (յուրաքանչյուրը մոտ 0,80 գրամ) այս արծաթյա դրամները (դիոբոլները) վկայում են ոչ միայն հոնիական վաճառաշահ կենտրոնների հետ Հայաստանի ունեցած տնտեսական կապերի, այլև վաղ հայկական շրջանում Երևանում ապրանքա-դրամական հարաբերությունների գոյության մասին։ Թերևս պատահական չէ, որ Երևանում նախասովետական տարիներին գտնվել էր աքեմենյան արծաթ դրամ մ. թ. ա. VI—V դարերից մնացած[2]։ Աքեմենյանների տիրակալությունը, որ արդեն մ. թ. ա. VI դարի կեսերից իր մեջ էր

---

1 *Պահվում է Հայաստանի պատմության թանգարանում, № 17541/1։*

2 А. Н. Зограф, Распространение находок античных монет на Кавказе, «Труды» отдела Нумизматики Государственного Эрмитажа, том I, Ленинград, 1945, *էջ 57։*

առնչ Առաջավոր ու Միջին Ասիայի երկրները, բազմաթիվ կապերով առնչվում էր հունական աշխարհի հետ և Երևանում գտնված Միլեթյան դրամներն այդ առնչություններից մի հիշատակություն են Հայաստանի վերաբերյալ։

Սակայն Երևանում և ընդհանրապես Հայաստանում ի հայտ եկած այդ դարաշրջանին պատկանող դրամները թվով շատ քիչ են և հազվագյուտ։

Մ. թ. ա. IV դար.ի վերջերից Երևանը ներգրավվում է հելլենիստական դրամների շրջանառության ոլորտը։ Միջազգային առևտրի շնորհիվ հայոց Արարատյան երկրամասն են մուտք գործել մակեդոնական, սելևկյան, պարթևական, հռոմեական և այլ հելլենիստական դրամներ, որոնք շրջանառության մեջ են եղել մ. թ. ա. IV — I դարերում։ Մասնավորապես Երևանի մատին կարելի է բերել երկու վկայություն։ Այսպես, 1932 թ. քաղաքի Կոնդ կոչվող թաղամասի գերեզմանատանը հողը փորելիս Ասատուր Հովհաննիսյանը գտավ Ալեքսանդր Մակեդոնացու արծաթյա տետրադրախման։ 1948 թ. Կարմիր-լյուրի մոտ ևս պեղմամբ հայտնաբերվեց Ալեքսանդր Մակեդոնացու մի այլ արծաթյա դրամ (դրախմա)։ Ըստ ծագման դրանցից առաջինը գուրս է եկել Բաբելոնից, իսկ երկրորդը՝ Կարդիա քաղաքից։ Հայաստանի դրամական շրջանառության ընդհանուր օրինաչափություններից ելնելով պետք է ասել, որ Երևանում գտնված հիշյալ մակեդոնական արծաթյա դրամները միանգամայն հիշտ նշում են վաղ ժամանակներից Միջագետքի և Փոքր Ասիայի հետ Հայաստանի ունեցած արտաքին առևտրի գլխավոր ուղղությունները։ Ալեքսանդր Մակեդոնացու արծաթ դրամները մ. թ. ա. IV դարի վերջերից լայնորեն տարածված էին քաղաքակիրթ երկրներում։ Միջազգային առևտրի զարգացման պահանջով նրանք թողարկվում էին Արևելքի և Արևմուտքի բազմաթիվ քաղաքներում։

Երևանում գտնված մակեդոնական դրամներն իրենց պատկերատիպով հար և նման են այն օրինակներին, որոնք գրվագվում էին մասսայարար։ Դրանց մի կողմին միշտ, որպես կանոն, գրոշմում էին առասպելական Հերակլեսի գլուխը, իսկ մյուս կողմին՝ աստվածահայր Զևսին և հունարեն գրերով Ալեքսանդրի անունը։

Ալեքսանդր Մեծի դրամները շատ երկար մնացին շրջանառության մեջ և մ. թ. ա. III—I դարերում առևտրում ընդունվում էին սելևկյան ու պարթևական, ինչպես նաև արտաշիսյան դրամների հետ միաժամանակ, որոնք բոլորն էլ իրենց միավորների կշռային չափերով թողարկվում էին ատտիկյան սիստեմի սկզբունքով։ Հիմնական միավորը դրախման էր, արծաթի 4,36 գրամ օրինական բաշով։ Հարկ է նկատի ունենալ, որ հելլենիստական դարաշրջանում Արարատյան երկրամասում միջազգային առևտրի կենտրոնը Արտաշատն էր, ուր հանգրվանում էին տարբեր երկրներից ժամանած բազմաթիվ քարավանները[3]։ Այստեղ էլ Մասիս սարի արաբսյան հովտում կատարվում էր հելլենիստական հնչուն դրամների ամենաաշխույժ շրջանառությունը։ Մ. թ. ա. II—I դդ. Երևանը արտաքին աշխարհի հետ առնչվում էր Արտաշատի միջոցով։ Երևանում գտնված սելևկյան և պարթևական դրամների մասին կան մի քանի վկայություններ։ Այսպես, քաղաքի գերեզմանատանը 1947 թ. գտնվեց սելևկյան Անտիոքոս VII Էվերգետ արքայի (138 — 129) տետրադրախման։ Դրա մի

3 Ա. Շահնազարյան, Արտաշատ, պատմա-աշխարհագրական ակնարկ, Հայաստանի գիտական պատմական թանգարանի աշխատություններ, հատ. IV, 1952, էջ 151։

կողմին դրոշմված է միապետի դիմանկարը, իսկ մյուսին՝ դիցուհի Աթենասի կերպարը յուր պաշտամունքի խորհրդանշաններով։ Շիլաճի կոչվող թաղամասում 1948 թ. հողային աշխատանքների ժամանակ ի հայտ եկավ պարթևական Հրահատ III (70—57) արքայի դրախման։ Կիրովի անվ. գործարանի շրջակայքում երևանցի Միքայել Մկրտչյանը հողից հանեց պարթևական Օրոդես I թագավորի (57—37) արծաթ դրամը։

Պարթևական դրամների վրա ևս ներկայացվում էին մի կողմից իշխող միապետի դիմանկարը, երբեմն կիսանդրու չափով, իսկ մյուսում՝ իրենց տոհմի նախահոր պատկերը բաղմած գահին, որի շուրջը հունարեն գրերով նշվում էին արքայի տիտղոսները։ Մատենագրական տեղեկություններից հայտնի է, որ հելլենիստական դարաշրջանում Հայաստանը տնտեսական ու քաղաքական սերտ փոխհարաբերությունների մեջ է եղել իր երկու մերձավոր հարևան երկրների՝ Սիրիայի ու Իրանի հետ։ Երևանում գտնված սելևկյան և պարթևական դրամները հաստատում են այդ վկայությունները։ Հիշենք թեկուզ հայոց արքա Արտավազդ II-ի իշխանության օրոք Երևանից ոչ հեռու, Արտաշատ մայրաքաղաքում տեղի ունեցած պարթևական արքայազն Բակուրի և հայոց Արտավազդ II-ի քրոջ ամուսնության հանդեսները, քաղաքական մի ակտ, որով ամրացվում էր Արևելքի երկու պետությունների դաշինքը հռոմեական նվաճողական քաղաքականության դեմ։ Ինքը՝ պարթևաց թագավոր Օրոդես I-ը (Բակուրի հայրը) այդ օրերին ժամանել էր Արտաշատ։ Սակայն ինչպես սելևկյան, այնպես էլ պարթևական դրամների առանձին օրինակների գյուտերը Երևանում մասսայական բնույթ չեն կրում։ Հելլենիստական դրամների ամբողջական գանձեր այստեղ դեռևս չեն գտնվել։ Էրեբունիում 1962 թ. գտնված Օգոստոս Օկտավիանոս կայսեր արծաթ դրամը և I—II դդ. հռոմեական այլ եղակի դրամները լայն տարածում չեն ունեցել։

Արդեն մեր թվականության III դարի սկզբից Երևանը ներգրավվում է միջազգային առևտրում իշխող երկու տարբեր կշռային սիստեմներով թողարկվող դրամների՝ Հռոմեական կայսրության և Սասանյան Իրանի դրամական շրջանառության մեջ։ Ուշագրավ է, որ Երևանում հայտնաբերվել է նաև Հռոմին Լնթակա Բոսֆորի թագավորության 221 թ. էլեկտրե ստատերը՝ Ռիսկուպորիդ III-ի դիմանկարով[5]։ Ամիրյան փողոցում, շինարարական աշխատանքների միջոցին հողի փորվածքից 1939 թ. գտնվեց սասանյան Շապուհ I (233—269) արքայի պատկերով արծաթ դրամը։ Այդպիսի մի ուրիշ դրախմա ևս ի հայտ եկավ Կարմիր-բլուրի շրջակայքում, հնագիտական պեղումների ժամանակ։ Սասանյան դրամների վրա Երևանի բնակիչները կարող էին տեսնել ոչ միայն Իրանի արքայի կիսանդրին՝ թագավորական զարդարանքներով, այլև զրադաշտական «սուրբ» համարված կրակի պատկերը[6]։

Երևանի պետական համալսարանի մոտ 1940 թ. հողային աշխատանքների ժամանակ գտնվեց սասանյան Խոսրով I արքայի իշխանության տարիներին (531—579) թողարկված մի դրախմա։ Ուշ հռոմեական դրամներից Երևանում շրջանառության մեջ են եղել Թեոդոսիոս I (379—395), Հոնորիոս (393—423) և

---

4 Հակոբ Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. II, Երևան, 1944, էջ 251—252։

5 Հայաստանի պատմության թանգարան, № 13390։

6 Robert Göbl, Die Munzen der Sasaniden in Königlichen Munzkabinett, Haag, S. Graven Hage, 1962.

Վալենտինիան III (425—455) կայսրերի արծաթյա դրամները, հայտնաբերված մի ամբողջական դանձի ձևով։ Հարկ է նկատել, որ IV դարի վերջերից և հատկապես V դարից սկսած, երբ Հայաստանի մայրաքաղաքը դարձել էր Դվին-ը, Երևանի դրամական տնտեսությունը կապված է եղել Դվինի հետ, մի քաղաք, որ միջազգային առևտրի խոշոր կենտրոն էր Արևելքում։ Այդ իսկ պատճառով ինչպես Հայաստանի մյուս քաղաքներում, այնպես էլ Երևանում V—VII դարերում դրամական շրջանառության հիմնական միավորն է եղել սասանյան դրախման, սկզբնապես 4,25 գրամ և հետագայում՝ 3,90 գրամ արծաթի քաշով[7]։ Ուշ հռոմեական և վաղ բյուզանդական դրամները գործածվել են սասանյան դրախմայի կշռային չափի հետ բաղդատված, ելնելով արծաթի ու ոսկու 1։10 և կամ 1։13 հարաբերությունից։ Այդ հարաբերությունը միշտ փոխվում էր, կապված մետաղների շուկայական գների փոփոխման հետ։

VII դարում սասանյան դրախմաների հետ Երևանում ընդունվում էին նաև բյուզանդական կայսրության ծանր բաշի արծաթ դրամները՝ այսպես կոչված կրկնակի միլիարիսներ, թողարկված Հերակլեոսի և Հերակլի-Կոնստանդինի իշխանության տարիներին (610—641)։ Դրանց արծաթի պարունակության կշռային չափերից ելնելով 2 սասանյան դրախման փոխանակվում էր 1 բյուզանդական արծաթյա կրկնակի միլիարիսի հետ։

Արդեն VIII դարի սկզբից, երբ Հայաստանում վերջնականապես հաստատվել էր Արաբական խալիֆաթի տիրապետությունը և Դվինը ճանաչվել էր իբրև վարչական կենտրոն ոչ միայն Հայաստանի, այլև Ադվանքի ու Արևելյան Վրաստանի համար, Երևանի դրամային շրջանառությունը պետք է որ ընթանար այն հիմնական օրինաչափություններով, ինչ բնորոշ էր Դվինի և Անդրկովկասյան այլ քաղաքների համար։ Այստեղ առևտուրը մինչև IX դարի վերջը կատարվում էր արաբատառ դրամներով, այդ թվում նաև Դվինում կարված դրամներով։ Հիմնական միավորը արծաթյա դիրհեմն էր՝ 2,97 գրամ սահմանված քաշով։ Ներքին առևտրի մանր ծախսերի համար գործածվում էին Դվինում կտրված պղնձյա դրամները։ Սակայն VIII—IX դարերի վերաբերյալ դրամագիտական վկայությունների լայնակայությունը Երևանում հնարավորություն չի ընձեռում դատելու Օմայանների ու Աբբասյանների իշխանության տարիներին այս քաղաքի դրամական տնտեսության ներքին առանձնահատկությունների մասին։ 1951 թ. Երևանում գտնված մեկ հայտնի պղնձյա աբբասյան ֆելսը թերևս հուշում է այն սերտ կապի մասին, որ Երևանն ունեցել է Դվինի հետ։ Վերջինիս փողերանոցից դուրս էին գալիս Հայաստանի արաբ էմիրների հրամանով թողարկված պղնձյա դրամները զուտ տեղական առևտրի սպասարկման նպատակով[8]։

IX դարի վերջերից, երբ Հայաստանում գործադրվում էր Բագրատունիների իշխանությունը, Երևան են թափանցում բյուզանդական դրամներ։

Վերջիններիս հոսանքը տեղական առևտրում ուժեղանում է X դարից սկսած։ Այդ իրողության վկայությունն են ինչպես Երևանում, այնպես էլ ողջ Սրարատյան դաշտավայրի այլ մասերում ի հայտ եկած բյուզանդական դրամները։ Հիշենք 1939 թ. Երևանի օպերային թատրոնի կառուցման ժամանակ

---

7 Х. А. Мушегян, Денежное обращение Двина по нумизматическим данным, Ереван, 1962, էջ 19։

8 Խ. Մուշեղյան, Դվինի մի քանի դրամների մասին, Հայաստանի պատմական թանգարանի աշխատություններ, հատ. V, Երևան, 1959, էջ 115—117։

բացված բյուզանդական դրամների գանձը։ Դժբախտաբար այն լրիվ պահպանված չէ, բայց նրա պարունակությունից մեզ հայտնի 37 պղնձյա դրամները վերաբերում են X—XIII դարերին։ Ի՞նչ են ցույց տալիս բյուզանդական կայսրության այդ դրամները։ Նախ նկատենք, որ դրվագված լինելով պղնձից, այդպիսիները սպասարկել են ներքին առևտրի պահանջները։ Հետևապես կապը Բյուզանդիայի հետ եղել է անմիջական։ Պատկերների ու գրությունների նշանակության առումով այդ դրամները լայնորեն տարածել են Երևանում քրիստոնեության գաղափարը, որի ջատագովներն էին Հայաստանում Բագրատունյաց թագավորները։ Յուրաքանչյուր ոք, ով իր ձեռքին կունենար պղնձյա բյուզանդական դրամ, կտեսներ Հիսուս Քրիստոսի պատկերը և մաղթանքի խոսքեր ուղղված նրան։ Հայաստանում քաղաքային կյանքի բուռն զարգացման այս ժամանակաշրջանում դրամների թողարկումը կատարվում էր թեև ձեռքի աշխատանքով, բայց ինտենսիվ էր դարձել։ Փողերանոցները շատացել էին, նրանցում մետաղի հալման և դրվագման պրոցեսի մեջ աշխատանքի բաժանումը խորացել ու ճյուղավորվել էր։ Դրամների զանգվածային թողարկումից կնիքները շուտ էին շարքից դուրս գալիս։ Կնիքների վրա փորագրված պատկերներն ու խորագրերը չունեին անցյալին հատուկ կատարելություն, այլ արտահայտվում էին հաճախ խիստ սխեմատիկ տեսքով։ Այդ է պատճառը, որ այս շրջանում ինչպես բյուզանդական, այնպես էլ մուսուլմանական պղնձյա դրամները հապճեպ շինվածքի արգասիք են։

Երևանի վերաբերյալ դրամագիտական վկայությունները շատանում են XIII դարից սկսած։ Դվինի կործանումից հետո, որ կողոպտվել ու ավերվել էր Խորեզմի շահ Ջալալ-ադ-դինի զորքերի կողմից 1225 թ. և այնուհետև 1236 թ. արշավող մոնղոլական հորդաներից ոտնատակ եղել, Անիից հետո Երևանը ժառանգեց այն դերն ու նշանակությունը, որ ուներ Դվինը միջազգային առևտրում մինչև մոնղոլական արշավանքները։ Ամենայն հավանականությամբ մշտական բնակության համար Երևան էին տեղափոխվել նաև հին դվինցի արհեստավորներն ու վաճառականները։ Երևանը քարավանային նույն ճանապարհների վրա գտնվող և ավերված Դվինին ամենից մոտակա այն վայրն էր, որ այդ ժամանակներում համեմատաբար նպաստավոր էր դարձել քաղաքային կյանքի համար։ Եթե Դվինում շուրջ 30-ամյա հնագիտական պեղումներից մոնղոլական տիրապետության դրամներ չեն գտնվել, ապա Երևանի զբաղեցրած քաղաքային ողջ տարածության տարբեր մասերում ի հայտ են եկել մոնղոլական շրջանի տարբեր դրամներ ու դրամական գանձեր, որոնք վկայում են դրանց այստեղ ունեցած մասսայական տարածվածության մասին։ Այսպես, 1939 թ. օպերային թատրոնի շենքի տեղում, շինարարական աշխատանքների ժամանակ հողի փորվածքից դուրս եկան Հուլաղույան Աբաղա (1265—1282) և Ղազան Մահմուդ (1295—1304) խանների իշխանության տարիներին թողարկված դրամներ։ Ուշագրավ է, որ դրանց մեջ կան այնպիսի դրամական միավորներ, որոնք դրվագվել են երկլեզվյան՝ արաբերեն և ույգուրերեն արձանագրություններով։ Արաբատառ խորագրերով դրամները Արարատյան դաշտի բնակչությանը հայտնի էին դեռևս Արաբական խալիֆաթի և այնուհետև սելջուկյան XI — XII դարերի դրամներով։ Սակայն մոնղոլական տիրապետության սկզբնական շրջանում եղած դրամները, մասնավորապես Երևանում գտնված Հուլաղույան Աբաղա խանի անունով արծաթ դիրհեմները, իրենց վրա կրում էին քրիստոնեական պաշտամունքային խոսքեր։ Այդ կարգի դրամները թողարկվում էին

Հայաստանի և Վրաստանի վաճառաշահ քաղաքներում ապրող քրիստոնեական բնակչության ազդեցության ներքո։ Հավանաբար մոնղոլական խաներն իրենց տիրակալության նախնական շրջանում չէին կարող հաշվի չառնել քրիստոնյա ազգաբնակչության հավատալիքները։ Տեղական առ ու ծախի համար Երևանում գործածվում էին պղնձյա դրամներ, որոնց թողարկման գլխավոր կենտրոնը Անի քաղաքն էր։ Արդեն XIV դարի կեսերից առևտուրը Երևանում վարվում էր գերազանցապես հուլաղույան դրամներով, որոնք շրջանառության մեջ էին մտնում Իրանի և Անդրկովկասի բազմաթիվ քաղաքներից։ Երևանում առավել հաճախ են հանդիպում Աբու-Սաիդ և Անուշիրվան խաների Թիֆլիս, Անի, Թավրիզ, Նախճավան, Պարտավ, Ուրմիա և այլ քաղաքներում հատված արծաթ դրամները։ Այդ է վկայում 1948 թ. Երևանի Նոր Մալաթիա թաղամասում գտնված արծաթ դրամների գանձը։ Ուշագրավ է, որ հենց այս Աբու-Սաիդ և Անուշիրվան խաների օրոք, նրանց անունների հիշատակությամբ Երևանում թողարկվում են ոսկյա և առավելապես արծաթյա դրամներ՝ միջազգային շրջանառության համար։ XIV դարի երկրորդ կեսին Իրանի մոնղոլական դրամներից բացի Երևան են թափանցում Փոքր Ասիայի արևելյան մասի մոնղոլական փոխարքայության դրամները, թողարկված Արտենյան Ալա-ադ-դին խանի (1365—1380) անունով Երզնկա, Բաբերդ, Էրզրում (Կարին) քաղաքներում։

XV դարի առաջին իսկ տարիներից Երևանի ապրանքային փոխանակության գործարքներում դիտվում են ջելաիրյան արծաթ դրամներ Խոյից, Սալմաստից և Թավրիզից, ինչպես նաև թեմուրյան դիրհեմներ ու թենգաներ Լենկ Թեմուրի (1370—1404) ու սուլթան Մահմուդի (1388—1397) անուններով, դուրս եկան Ամիդից, Բիթլիսից, Բաղդատից, Սամարղանդից, Հերաթից, Շամախուց, Բաքվից և այլ քաղաքներից։ XIV—XV դարերում էլխանական և ջելաիրյան ու թեմուրյան արծաթ դրամների հետ միաժամանակ Երևանի դրամական շրջանառության մեջ դիտվում են թուրքմեն Կարա-Կոյունլու Կարա Յուսուֆի (1388—1420) և սուլթան Պիր Բուդաղի անուններով Հայաստանում և Իրանի հյուսիսային նահանգներում կտրված արծաթ դրամները։

Այս ժամանակաշրջանում միջազգային առևտուրը կենտրոնական Եվրոպայից անգամ արծաթ դրամներ է բերում Երևան։

Վենետիկի դուքս Անտոնիո Վենեռիոյի (1382—1400) արծաթ դրամը հայտնաբերվեց Երևանում 1949 թ. Պուշկինյան սարալանջում բացված XV դարի առաջին քառորդին պատկանող գանձի մեջ[9]։ Իբրև իրեղեն ապացույց տարբեր ծագման դրամական այն շրջանառության, որ եղել է XV դարի Երևանում, հիշատակության արժանի է Նորքում 1932 թ. գտնված գանձը։ Այստեղ կան Կարա-Կոյունլու Կարա Յուսուֆի (1388—1420) և Պիր Բուդաղի, ինչպես նաև թեմուրյան, ջելաիրյան ու արտենյան արծաթ դրամներ, որոնց առևտուրը բերել է Հայաստանի, Իրանի ու Կովկասի տարբեր ծայրերից։

XV դարի վերջերից միջազգային առևտուրը Երևան է բերում Տրապիզոնի կայսրության արծաթ դրամների վրացական ընդօրինակությունը, իսկ XVI դարից Երևան են գալիս նաև Վենետիկի ոսկյա դրամները։ Այդ երկու վկայությունները գիտությանը հայտնի դարձան Երևանի Սովետաշեն և Այգեստան թաղերում գտնված գանձերի շնորհիվ։ Սակայն XVI դարի սկզբից Երևանի դրամային շրջանառության համար բնորոշ են դառնում իրանական շահերի

9 Հայաստանի պատմության թանգարան, № 16267։

դրամները։ Դրանցից Երևանում լայն տարածում են ունեցել Սեֆյան հարստության արծաթյա դրամական միավորները։

Սեֆյանների տիրապետության սկզբնական շրջանում առևտրի մեջ դեռևս ընդունվում էին անցյալից մնացած թեմուրյան և ջելաիրյան արծաթ դրամներ, որոնց թվում հիմնականը «թենգա» ու «դիրհեմ» կոչված միավորներն էին։ Վերջիններս փոխանակվում էին 1։4 հաշվով, եթե նկատի ունենանք, որ թենգան մոտ 6,20 դրամ էր, իսկ դիրհեմը խիստ նվազել էր իր քաշով և արծաթի պարունակությամբ կազմում էր թենգայի քառորդ մասը։ Սեֆյան Իսմայիլ I շահի օրոք (1502—1524) դրամական սիստեմի հիմնական միավորի՝ թենդայի քաշը սահմանվում է 2 մսխալ արծաթ, որը կազմում էր 9,37 դրամ։ Ինչպես անցյալներում, այս շրջանում ևս միջազգային դրամական գործարքները կատարվում էին արծաթով, ոսկին թողարկվում էր համեմատաբար քիչ։ Սեֆյանների տիրապետության ավելի քան 60 քաղաքներում, այդ թվում նաև Երևան քաղաքում, դրվագում էին արծաթ դրամներ, ըստ որում շրջանառության մեջ տարածված էին առավելապես թենդաներ, կրկնակի թենգաներ (4 մսխալ արծաթ յուրաքանչյուրի համար), կես թենգանոցներ (մեկ մսխալ=4,660 դրամ), ինչպես նաև կես և քառորդ մսխալի չափով արծաթյա դրամական միավորներ։ Սեֆյանների դրամական սիստեմում XVI դարում ոսկյա դրամը կոչվում էր էշրէֆի, իսկ արծաթյա միավորները՝ թենդա, դիրհեմ, շահի և այլն։ Մեկ արծաթյա շահին հավասարվում էր 50 պղնձյա դինարի։ Հավատարիմ մնալով իսլամի դոգմատիկ կանոններին, Սեֆյանները, ինչպես մուսուլմանական Արևելքի նախորդ շատ տերություններ, իրենց դրամների վրա պատկերներ չէին դրոշմում, այլ արձանագրում էին միայն 12 իմամների անունները և առանձին կրոնական ասույթներ։

Շահ Իսմայիլի հաջորդի՝ Թահմազ I շահի (1524—1576) իշխանության տարիներին արծաթ դրամական միավորի քաշը իջնում է մինչև մեկ մսխալը։

Աբբաս շահը 1595 թ. դրամական ռեֆորմով սահմանեց արծաթե նոր միավոր, որն իր անունով էլ կոչվեց «Աբբասի»՝ 7,7 գրամ քաշով։ Ապրանքափոխանակության մեջ այդ հիմնական միավոր հանդիսացող արծաթյա մեկ աբբասանոցը հավասար էր 200 դինարի։ Թողարկվում էին նաև 4,86 գրամ քաշով արծաթե դրամներ, որոնք կոչվում էին Մահմուդի։ Բոլոր աբբասիները իրենց վրա ունեին գերազանցապես ֆարսերեն գրություններ։

XVI դարի ընթացքում Երևանի բնակչությունն առևտուրը վարում էր մեծ մասամբ սեֆյան դրամներով։ Սակայն հետագայում, XVII—XVIII դարերում այստեղ շահական դրամների հետ միասին շրջանառության մեջ եղել են նաև օսմանյան սուլթանների ու որոշ չափով բարուրյան արծաթ դրամներ (Հնդկաստանից)։

Կարևոր է նշել, որ XVI դարի առաջին կեսից գրեթե անընդմեջ Երևանը հանդիսանում է շահական դրամների թողարկման նշանավոր կենտրոններից մեկը Հայաստանում։ Ընդհանուր առումով Երևանում ի հայտ են գալիս Աղվանական, Աֆշարյան, Զենդյան ու Կաջարյան դինաստիաների իրանական դրամներ։ Դրանց մեջ հաճախ են պատահում Թահմազ I (1524—1576), Աբբաս II (1642—67), Սուլեյման I (1667—1694), Հուսեյն I (1694—1722), Թահմազ II (1722—1731), Աբբաս III (1731—1736), Աղվան Աշրաֆ շահի (1725—1729), Աֆշարյան Նադիր շահի (1736—1747) և Շահրուխի (1748—1796) անուններով արծաթ դրամներ, դուրս եկած առավելապես Երևան, Իսպահան,

Թավրիզ, Ռեշտ, Շիրազ, Ղազվին, Մշխեդ, Նադիրաբադ և այլ քաղաքներից։ Օսմանյան ծագում ունեցող դրամական միավորներից այստեղ ոտնվել են Ահմեդ II (1691—1695), Մուստաֆա II (1695—1703), Ահմեդ III (1703—1730), Մահմուդ I (1730—1754), Մուստաֆա III (1757—1773), Աբդալ Համիդ (1773—1789) սուլթանների Ստամբուլում, Թիֆլիսում, Դյանջայում, Թավրիզում և այլ քաղաքներում դրվագված դրամները։ Օսմանյան իշխանության օրոք ևս Երևանում թողարկել են դրամներ։

Ընդհանուր առումով Երևանում հատված դրամների շարքը որոշակի ցույց է տալիս նրա փողերանոցի ինտենսիվ գործունեությունը հիշյալ ժամանակներում։ Հնդկական ծագում ունեցող դրամները Բաբուրյան դինաստիայի Մուհամմեդ շահի (1719—1748) իշխանության «ռուպիա» կոչված միավորներն են՝ արծաթի մոտ 12 դրամ քաշով։ Դրանք դուրս են եկել Հնդկաստանի առևտրական կյանքի խոշոր կենտրոն Շահջահանաբադ քաղաքից[10]։ Պետք է ասել, որ XVII դարի առաջին իսկ քառորդից Երևանի դրամական շրջանառության մեջ արտացոլվում են նաև արևմտաեվրոպական արծաթյա դրամներ։ Սեֆյանների հրամանով եվրոպական ծանր քաշի տալերները հանձնվում էին տեղական փողերանոցները և նրանց ձուլվածքից դրվագվում էին իրանական աբբասիներ։ Մեկ ռայխստալերը, որ մոտ 28 գրամ արծաթ էր, վերածվում էր ընդհանուր քաշով 23 գրամ արծաթի պարունակությամբ երեք աբբասանոցների։ Այդ հաշվով տեղական իշխանությունները յուրաքանչյուր եվրոպական ծանր քաշի տալերից մոտ 5 գրամ արծաթի մաքուր օգուտ էին ստանում։

Միջազգային առևտուրը Արևմտյան Եվրոպայից իրանական և թուրանական տիրապետության շրջանները, այդ թվում և Անդրկովկաս էր բերում նաև XVII—XVIII դարերի ոսկյա դրամներ մասնավորապես Վենետիկից։ Հայաստանում հայտնաբերվել են այդպիսի դրամական գանձեր, որոնցից մեկն էլ հայտնաբերվեց Երևանում 1928 թ.։

Քաղաքային կյանքի պատմության համար նշանակալից են նաև XVII—XVIII դդ. պղնձյա դրամները։ Երևանում մանր առուծախի համար տեղական իշխանությունները թողարկում էին պղնձյա դրամներ։ Վերջիններիս պատկերատիպը խիստ փոփոխական է գրեթե յուրաքանչյուր տարվա համար։ Նրանց մի կողմին դրոշմում էին կենդանական պատկերներ, իսկ մյուսին արձանագրում էին քաղաքի անունը, ինչպես նաև դրամի թողարկման տարեթիվը։ Երևանյան կտրվածքի այս պղնձյա դրամները XVII—XVIII դարերում ունեին շրջանառության խիստ տեղական բնույթ։ Նրանց ընդունելությունը դրսում բացառված էր, ճիշտ այնպես, ինչպես Թավրիզի, Խոյի, Գյանջայի և կամ Թիֆլիսի տեղական կտրվածքի պղնձյա դրամները (ֆուլուսները) Երևանում շրջանառություն չունեին։

Պղնձյա դրամների պատկերատիպային փոփոխությունը օգուտ էր բերում տեղական իշխանություններին, եթե նկատի առնվի այն իրողությունը, որ յուրաքանչյուր նոր տիպի պղնձյա դրամների թողարկմամբ հին պատկերատիպի դրամները չէին ընդունվում և հանձնվում էին ձուլման նոր պղնձյա դրամի կես արժեքի չափով։

---

10 Գանձ գտնված Երևանի II հիդրոկայանի շինարարության ժամանակ 1930 թ.։

Տեղական կտրվածքի պղնձյա դրամներ Երևանում հաճախ են գտնվում։ Հայտնի են շատ դեպքեր, երբ երևանցիները պատահաբար գտել են իրենց քաղաքի անվամբ XVII—XVIII դդ. պղնձյա դրամներ։

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԿՏՐՎԱԾ ԴՐԱՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈՒԼԱՂՈՒՅԱՆ ԱԲՈՒ-ՍԱԻԴ ԲԱՀԱԴՈՒՐ ԽԱՆԻ (1316—1335) ԱՆՈՒՆՈՎ

Ոսկի դրամ՝ դինար, հիջրայի 733 (1332—1333) տարեթվով

ՀՈՒԼԱՂՈՒՅԱՆ ԱՆՈՒՇԻՐՎԱՆ ԽԱՆԻ (1344—1354) ԱՆՈՒՆՈՎ

Արծաթ դրամ՝ դիրհեմ, հիջրայի 747 (1346—1347) տարեթվով

ՍԵՖՅԱՆ ԹԱՀՄԱՍ I ՇԱՀԻ (1524—1576) ԱՆՈՒՆՈՎ

Ոսկյա դրամ՝ էշրեֆի, հիջրայի ջնջված տարեթվով

Արծաթ դրամ՝ թենգա, հիջրայի				*942*	*(1535—1536)*	*տարեթվով*
»	»	»	»	*948*	*(1541—1542)*	»
»	»	»	»	*949*	*(1542—1543)*	»
»	»	»	»	*950*	*(1543—1544)*	»
»	»	»	»	*952*	*(1545—1546)*	»
»	»	»	»	*953*	*(1546—1547)*	»
»	»	»	»	*954*	*(1547—1548)*	»
»	»	»	»	*955*	*(1548—1549)*	»
»	»	»	»	*957*	*(1550)*	»
»	»	»	»	*959*	*(1551—1552)*	»
»	»	»	»	*972*	*(1564—1565)*	»
»	»	»	»	*974*	*(1566—1567)*	»
»	»	»	»	*975*	*(1567—1568)*	»

ՍԵՖՅԱՆ ԻՍՄԱՅԻԼ II ՇԱՀԻ (1576—1578) ԱՆՈՒՆՈՎ

Արծաթ դրամ՝ թենգա, հիջրայի 984 (1576—1577) տարեթվով

ՍԵՖՅԱՆ ՄՈՒՀԱՄԵԴ ԽՈԴԱԲԵՆԴԵ ՇԱՀԻ (1578—1587) ԱՆՈՒՆՈՎ

Արծաթ դրամ՝ թենգա, հիջրայի				*985*	*(1577—1578)*	*տարեթվով*
»	»	»	»	*986*	*(1578—1579)*	»
»	»	»	»	*988*	*(1580—1581)*	»
»	»	»	»	*989*	*(1581)*	»
»	»	»	»	*992*	*(1584)*	»

ՍԵՖՅԱՆ ԱԲԲԱՍ I ՇԱՀԻ (1587—1629) ԱՆՈՒՆՈՎ

Արծաթ դրամ՝ աբբասի, ջնջված տարեթվով

ՍԵՖԻ I (1629—1642) ՇԱՀԻ ԱՆՈՒՆՈՎ

Արծաթ դրամ՝ աբբասի, հիջրայի 1038 (1628—1629) տարեթվով

ՍԵՖՅԱՆ ԱԲԲԱՍ II ՇԱՀԻ (1642—1666) ԱՆՈՒՆՈՎ

Պղնձե դրամ՝ կազմեկի, հիջրայի				*1057*	*(1647)*	*տարեթվով*
Արծաթ դրամ՝ աբբասի, հիջրայի				*1070*	*(1659—1660)*	»
»	»	»	»	*1075*	*(1664—1665)*	»
»	»	»	»	*1076*	*(1665—1666)*	»

ՍԵՖՅԱՆ ՍՈՒԼԵՅՄԱՆ I ՇԱՀԻ (1667—1694) ԱՆՈՒՆՈՎ

Արծաթ դրամ՝	աբբասի,	հիջրալի	1083 (1672—1673)	տարեթվով
»	» »	»	1084 (1673—1674)	»
»	» կես »	»	1083 (1672—1673)	»
»	» կես աբբասի	»	1084 (1673—1674)	»
»	» աբբասի	»	1103 (1691—1692)	»
»	» շահի	»	1103 (1691—1692)	»
»	» աբբասի	»	1104 (1692—1693)	»
»	» շահի	»	1104 (1692—1693)	»
»	» աբբասի	»	1105 (1693—1694)	»
»	» շահի	»	1105 (1693—1604)	»

ՍԵՖՅԱՆ ՀՅՈՒՍԵԻՆ I ՇԱՀԻ (1694—1722) ԱՆՈՒՆՈՎ

Արծաթ դրամ՝	աբբասի,	հիջրայի	1108	(1696—1697) տարեթվով
»	» »	»	1110	(1698—1699) »
»	» »	»	1112	(1700—1701) »
»	» »	»	1113	(1701—1702) »
»	» »	»	1115	(1703—1704) »
»	» »	»	1117	(1705—1706) »
»	» »	»	1119	(1707—1708) »
»	» »	»	1123—1127	(1711—1715) տարեթվ.
»	» »	»	1130—1134	(1717—1722) »
»	» մահմուդի	»	1112	(1700—1701) »
»	» »	»	1115	(1703—1704) »
»	» »	»	1117	(1705—1706) »
»	» »	»	1123	(1711—1712) »
»	» »	»	1125	(1713) »
»	» »	»	1126	(1714) »
»	» »	»	1128—1133	(1715—1721) »
»	» 5 շահանոց	»	1123—1129	(1711—1717) »
»	» մեկ շահի,	հիջրայի	1107	(1695—1696) »
»	» »	»	1108	(1696—1697) »
»	» »	»	1116	(1704—1705) »
»	» »	»	1117	(1705—1706) »
»	» »	»	1124—1130	(1712—1718) »

ՍԵՖՅԱՆ ԱԲԲԱՍ III ՇԱՀԻ (1731—1736) ԱՆՈՒՆՈՎ

Արծաթ դրամ՝	աբբասի,	հիջրայի	1135	(1722—1723) տարեթվով
Պղնձե »	մահմուդի	»	1136	(1723—1724) »

ՍԵՖՅԱՆ ԱԲԲԱՍ III ՇԱՀԻ (1731—1736) ԱՆՈՒՆՈՎ

Արծաթ դրամ	աբբասի,	հիջրայի	1147	(1734—1735) տարեթվով
»	» »	»	1148	(1735—1736) »
»	» մահմուդի	»	1148	» » »

ԱՖՇԱՐՅԱՆ ՆԱԴԻՐ ՇԱՀԻ (1736—1747) ԱՆՈՒՆՈՎ

Արծաթ դրամ	աբբասի,	հիջրայի	1148	(1735—1736) տարեթվով
Պղնձե դրամ	կազբեկի	»	1160	(1747) »

ԶԵՆԴՅԱՆ ՔԵՐԻՄ ԽԱՆԻ (1750—1779) ԱՆՈՒՆՈՎ

Արծաթ դրամ՝ աբբասի, առանց տարեթվի				
» » աբբասի, հիջրայի	1181	(1767—1768)	տարեթվով	
Արծաթ » » »	1185	(1771—1772)	տարեթվով	

ԿԱՋԱՐՅԱՆ ՖԱԹՀ ԱԼԻ ՇԱՀԻ (1797—1834) ԱՆՈՒՆՈՎ

Արծաթ դրամ՝ ռիյալ,	հիջրայի	1216	(1801—1802)	տարեթվով		
Ոսկի »	թուման	»	1217	(1802—1803)	»	
Ոսկի »	թուման	»	1218	(1803—1804)	»	
Արծաթ »	ռիյալ	»	1218	(1803—1804)	»	
Ոսկի »	թուման	»	1219	(1804—1805)	»	
Արծաթ »	ռիյալ	»	1219	(1804—1805)	»	
Արծաթ »	ռիյալ	»	1222	(1707—1808)	»	
» »	»	»	1223	(1808—1809)	»	
» »	»	»	1224	(1809—1810)	»	
Ոսկի »	թուման	»	1233	(1817—1818)	»	
Ոսկի »	»	»	1234	(1818—1819)	»	
Ոսկի »	»	»	1235	(1819—1820)	»	

Թ Ո Ի Ր Ք Ի Ա

ՕՍՄԱՆՅԱՆ ՍՈՒԼԹԱՆ ԱՀՄԵԴ III-Ի (1703—1730) ԱՆՈՒՆՈՎ

Արծաթ դրամ՝ օնլիկ, հիջրայի,	1115	(1703—1704)	տարեթվով
» » բեշլիկ »	1115	(1703—1704)	»
» » նիսֆբեշլիկ »	1115	(1703—1704)	»

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊՂՆՋՅԱ ԴՐԱՄՆԵՐ

Սրանց վրա անձնանունների հիշատակումներ չկան և միմյանցից տարբերվում են տարեթվերով և կենդանական պատկերներով։ Մեզ հայտնի են Երևանում կտրված հետևյալ պղնձյա դրամները (ֆուլուսները).

Հիջրայի	1004	(1595—1596)	տարեթվով	և լորիկի պատկերով
»	1052	(1642—1643)	»	և փղի պատկերով
»	1095	(1683—1684)	»	և ոչխարի պատկերով
»	1104	(1692—1693)	»	սագի պատկերով
»	1108	(1696—1697)	»	սիրամարգի պատկերով
»	1117	(1705—1706)	»	աքաղաղի »
»	1120	(1708—1709)	»	առյուծի և արևի »
»	1122.	(1710—1711)	»	ձկան »
»	1127	(1715)	»	կապկանման կենդանու »
»	1128	(1715—1716)	»	» » »
»	1130	(1717—1718)	»	արևի և առյուծի »
»	1132	(1719—1720)	»	ուղտի պատկերով
»	1132	(1719—1720)	»	փղի պատկերով
»	1133	(1720—1721)	»	ուղտի պատկերով
»	1136	(1723—1724)	»	երկու առյուծներ իրար վրա երկու ձկների պատկերով
»	1216	(1801—1802)	»	աստղագիտական նշաններով

Հիջրայի 1232	(1816—1817)	տարեթվով,	առյուծի	և	արևի	պատկերով
» 1240	(1820—1821)	»	»	»	»	
» 1236	(1824—1825)	»	»	»	»	

Հետագայում Երևանի դրամական շրջանառությունը զարգանում է ռուսական կայսրության մեջ։ Քաղաքի պատմության ռուսական տիրապետությունից, որպես հիշատակ, մնացել է պղնձյա մի մեդալ, նվիրված Երևանի գրավմանը։

НУМИЗМАТИЧЕСКИЕ ДАННЫЕ ОТНОСИТЕЛЬНО ИСТОРИИ ЕРЕВАНА

Х. А. МУШЕГЯН

(Резюме)

На основании монет и монетных кладов, обнаруженных в городе Ереване и его окрестностях, прослеживается история денежного обращения города с ранних времен до начала XIX столетия

Наиболее ранними нумизматическими памятниками Еревана являются серебряные ионийские монеты милетского чекана V в. до н. э., найденные при раскопках крепости Эребуни в 1956 г.

Находками эллинистических монет IV—I вв. отмечается вовлечение города в сферу обращения македонских, селевкидских, парфянских и армянских монет, выпущенных по аттической весовой системе. Однако как классические, так и эллинистические монеты в Ереване не имели массового распространения и судить о внутренних особенностях их обращения не представляется возможным.

По нумизматическим данным с XIV века, Ереван был ведущим центром средневековой городской жизни в Араратской долине, являясь как бы преемником в той важной роли, которую сыграли в международной торговле в прошлом Арташат, Двин и Ани. Состав кладов отражает обращение в Ереване хулагуидских, джелаиридских, темуридских монет XIV—XV вв., а также монет племен Кара-Коюнлу. С начала XVI в. преобладающими в денежном хозяйстве Еревана являлись монеты иранских шахов — Сефевидов, Афганцев, Афшаридов, Зендов и Каджаров. Одновременно с иранскими монетами в Ереван, в период XVII—XVIII вв., поступали также монеты великих моголов Индии и османских султанов Турции. Помимо восточных монет, в Ереван проникали также западноевропейские серебряные и золотые монеты.

В конце статьи дается список тех золотых, серебряных и медных монет, которые были чеканены в Ереване.